ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 610-Ա « 21 » ապրիլի 2026թ.

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 146-րդ կետի պահանջները՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյան /Լենինգրադյան/ փողոցի N 16 հասցեի վարչական շենքի՝ որպես կառավարման կենտրոնի վերակառուցման աշխատանքները շահագործման ընդունելու նպատակով.

1.Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ա. Խեչիկյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի ղեկավար /հանձնաժողովի նախագահ/
Ա. Մելքոնյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական ծրագրերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ
«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Գուրգենյան	- Կապալառու կազմակերպություն
«ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն Տ.Պողոսյան	- Տեխնիկական հսկողություն իրականացնող
«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Սեդոյան	- Հեղինակային հսկողություն իրականացնող

«ԵՐԵՎԱՆԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ վարչատնտեսական բաժնի պետ Ա.Դավթյան - Շահագործող կազմակերպություն

«ԵՐԵՎԱՆԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ճարտարագետ Ե.Խաչիբաբյան - Շահագործող կազմակերպություն

2. Հանձնաժողովին՝ ստուգել կատարված աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծին, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին ու ստանդարտներին և կազմել աշխատանքների հանձնման – ընդունման ակտ:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի վրա:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ